

Ձեռնարկատիրական գործունեության արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների ապահովվածության գնահատումն AIP ինդեքսով և բարելավման գերակայությունները

Վարդանյան Ա. Է.

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Հայաստան, Երևան)

artsruni.vardanyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ գնահատում, AIP ինդեքս, արտադրական, ոչ արտադրական, ընդհանրական, բարելավում

Оценка обеспечения инфраструктуры предпринимательской деятельности по индексу AIP и приоритеты совершенствования

Варданыан А.Э.

Армянский государственный экономический университет (Армения, Ереван)

artsruni.vardanyan@gmail.com

Резюме: Разработка и локализация нового индекса, изучение позиции Армении в глобальных отчетах, анализ производственных и непроизводственных инфраструктур Армении, мы пришли к выводу, что в Армении существует серьезная необходимость в повышении уровня обеспечения инфраструктуры предпринимательской деятельности, которая, по нашему мнению, будет удовлетворена путем функционирования наших предложений.

Ключевые слова: Оценка, AIP индекс, производственный, непроизводственный, совершенствование

Evaluation of the AIP Index for assessment of the provision of entrepreneurial infrastructure and priorities for improvement

Vardanyan A.E.

Armenian State University of Economics (Armenia, Yerevan)

artsruni.vardanyan@gmail.com

Abstract: Developing and localizing the new index, studying the position of Armenia in global reports, analyzing the industrial and non-industrial infrastructures of Armenia, we concluded that in Armenia there is a serious need to improve the level of the provision of entrepreneurial infrastructure, which, in our opinion, will be satisfied by the functioning of our offers.

Keywords: Assessment, AIP index, industrial, non-industrial, development

Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման հիմքում դրել ենք GEI համաշխարհային ինդեքսում ներկայացված ինդիկատորները: 2018թ-ին Հայաստանն այս ինդեքսում զբաղեցնում է 89-րդ հորիզոնականը: Վերը բերված ինդիկատորներից մենք ընտրել ենք ՀՀ իրականությանը համապատասխանող հետևյալ ինդիկատորները՝

Մեկնարկի հմտություններ (Startup Skills)

Ռիսկայնություն (Risk Acceptance)

Ներվորքինգ (Networking)

Շուկա մուտք գործելու հնարավորություններ (Opportunity Startup)

Տեխնոլոգիական կլանում (Technology Absorption)

Մարդկային ռեսուրսներ (Human Capital)

Մրցակցություն (Competition)

Գործընթացային նորարարություն (Process Innovation)

Միջազգայնացում (Internationalization)

Ռիսկ-կապիտալ (Risk Capital)

Հիմք ընդունելով կատարված եզրակահանգումները՝ մշակել ենք ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման ինդեքսը (Assessment of the infrastructural provision, այսուհետ՝ AIP), որի միջոցով գնահատելու ենք Հայաստանի դիրքն՝ որպես ելակետային սովյալներ ընդունելով GEI (Global Entrepreneurship Index (Գլոբալ ձեռնարկատիրության

ինդեքս)) ինդեքսում ներառված ենթակառուցվածքային տարրերը:

Վերը բերված ինդիկատորները դասակարգել ենք մեր կողմից ընտրված դասակարգման հիմքով առանձնացված ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ոլորտների հիմքով՝ ըստ արտադրական և ոչ արտադրական ուղղությունների՝ AIPi (Assessment of the industrial infrastructural provision, այսուհետ՝ AIPi) և AIPn-i (Assessment of the non-industrial infrastructural provision, այսուհետ՝ AIPn-i)

AIPi-ի ինդեքսի գնահատման համար ընտրել ենք հետևյալ ինդիկատորները՝

Մեկնարկի հմտություններ (Startup Skills)

Ռիսկայնություն (Risk Acceptance)

Մրցակցություն (Competition)

Միջազգայնացում (Internationalization)

Ռիսկ-կապիտալ (Risk Capital)

AIPn-i -ի ինդեքսի գնահատման համար ընտրել ենք հետևյալ ինդիկատորները՝

Նեթվորքինգ (Networking)

Շուկա մուտք գործելու հնարավորություններ (Opportunity Startup)

Տեխնոլոգիական կլանում (Technology Absorption)

Մարդկային ռեսուրսներ (Human Capital)

Գործընթացային նորարարություն (Process Innovation)

AIPi և AIPn-i ինդեքսներում Հայաստանի դիրքի հաշվարկման և համապատասխան եզրահանգումներ կատարելու նպատակով ընտրել ենք 3 խումբ երկրներ՝ յուրաքանչյուր խմբում 12-ական երկիր՝ ընտրանքի հուսալիությունը պայմանավորելով 8-12 տարրերից բաղկացած ընտրանքն առավել օպտիմալ համարելու հանգամանքով: Այս ընտրախմբից ավել կամ պակաս ընտրախմբի դեպքում մեծանում է ընտրանքի և հետազոտության ելքի սխալի հավանականությունը: Նմանօրինակ հետազոտություններում բազմաթիվ են այն հանգամանքները, որոնք բարդացնում են ընտրանքի սխալի հաշվարկումը, ինչը հանգեցնում է մաթեմատիկորեն հաշվարկված ներկայացուցչական ընտրանքի՝ որակապես ոչ ներկայացուցչական լինելու փաստին: Երկրների կազմը հետևյալն է՝

Չարգացած երկրներ՝ Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Կանադա, ԱՄՆ, Ֆրանսիա և Ճապոնիա, Չինաստան, Ռուսաստան,

նվազ խոշոր երկրները, ոչ թե փոքր են տարածքով կամ բնակչությամբ, այլև համաշխարհային արդյուբերության մեջ զբաղեցնում են տասնորդական տոկոսներ, Ավստրալիա, Շվեյցարիա, Ավստրիա:

Նավթ արդյունահանող երկրներ՝ Սաուդյան Արաբիա, Կատար, Իրան, Վենեսուելա, Ալժիր, Քուվեյթ, Կոլումբիա, Բնդոնեզիա, Նորվեգիա, Նիգերիա, Արգենտինա, Դանիա:

Ցամաքով շրջափակված զարգացող երկրներ՝ Հայաստան, Ադրբեջան, Ղազախստան, Ղրղզստան, Լատվի ժողովրդավարական Հանրապետություն, Բոլիվիա, Պարագվայ, Ռուանդա, Մոլդովա, Չադ, Բուրկինա Ֆասո, Մակեդոնիա¹:

Գնահատման միջակայքը սահմանել ենք [0;1]:

Աղյուսակ 1. AIP ինդեքսի գնահատման միջակայքը

Գնահատման միջակայքը	Մեկնաբանությունը
$ 0 - \pm 0.35 $	Բոլոր այն երկրները, որոնց ցուցանիշը չի հատում 0.35-ի սահմանը, տվյալ ինդիկատորների գծով ունեն ոչ բարենպաստ դիրք և քայլեր պետք է ձեռնարկեն այդ ինդիկատորների բարելավման ուղղությամբ
$ 0.36 - 0.59 $	Երկրներն ունեն միջին դիրք
$ 0.6 - 1 $	Երկրներում ձեռնարկատիրական գործունեությունն ապահովված է և ստեղծված են զարգացման բոլոր նախադրյալները

Այժմ ներկայացնենք հաշվարկների կատարման մեթոդաբանական մոտեցումները: Երկրների դիրքերի հաշվարկման համար ընտրել ենք դիֆերենցիալ մեթոդը, որն իրենից ներկայացնում է գնահատվող օբյեկտի միասեռ (մեր ուսումնասիրության շրջանակներում

¹ Դասակարգման հիմքը ՄԱԿ-ի կողմից կատարված «Ցամաքով շրջափակված զարգացող երկրներ (ՅՇԶԵ)» հետազոտությունն է:

սույնը նշանակում է, որ ուսումնասիրվող բոլոր ինդեքսները վերաբերում են ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովմանը պարամետրերի համադրման մեթոդ, ինչի արդյունքում ստանում ենք պարամետրիկ ինդեքս՝

$$I_{G_i} = \frac{G_i}{G_{13}} * 100 \quad (1.),$$

որտեղ $i=1, \dots, n$; G_i –ը i -րդ գնահատվող պարամետրն է, իսկ G_{13} –ը՝ ձեռնարկատիրական գործունեության ապահովվածության գնահատման i -րդ պարամետրի «էտալոնային» արժեքն է, որպիսին մենք ընտրել ենք ուսումնասիրվող ինդեքսում ներառված երկրների ռանգավորման միջին թվաբանականը. այն կազմել է 137:

AIPi և AIPn-ի ինդեքսների պարամետրիկ ինդեքսները որոշելուց հետո պետք է որոշենք AIPi և AIPn-ի ինդեքսները, ինչի համար նպատակահարմար է կիրառել կոմպլեքս-համակարգային մեթոդը՝

$$x_{ij} = \frac{a_1 + a_2 + \dots + a_n}{n} \quad (2.)$$

որտեղ a -ն արդեն իսկ որոշված պարամետրիկ ինդեքսներն են, max_{ij} ՝ AIPi և AIPn-ի ինդեքսներում ներառված երկրների ռանգավորման առավելագույն ցուցանիշն է:

Ներկայացնենք Հայաստանի հաշվարկը՝ Պարամետրիկ ինդեքս՝ Մեկնարկի հմտություններ

$$I_{G_1} = \frac{0.308}{137} * 100 = 0,225$$

Պարամետրիկ ինդեքս՝ Ռիսկայնություն

$$I_{G_2} = \frac{0.059}{137} * 100 = 0,043$$

Պարամետրիկ ինդեքս՝ Մրցակցություն

$$I_{G_3} = \frac{0.242}{137} * 100 = 0,177$$

Պարամետրիկ ինդեքս՝ Միջազգայնացում

$$I_{G_4} = \frac{0.274}{137} * 100 = 0,200$$

Պարամետրիկ ինդեքս՝ Ռիսկ-կապիտալ

$$I_{G_5} = \frac{0.118}{137} * 100 = 0,086$$

Որոշենք AIPi ինդեքսները, ինչի համար նպատակահարմար է կիրառել կոմպլեքս-համակարգային մեթոդը: 0.225-ն է, իսկ

$\frac{a_1 + a_2 + \dots + a_n}{n}$ –ը՝ ներառված ցուցանիշների

միջին թվաբանականը $(0,225+0,043+0,177+0,200+0,086/5)$ ՝ 0.146

$$x_{1j} = \frac{0.146}{0.225} = 0.650$$

Ներկայացնենք Հայաստանի հաշվարկը՝ Պարամետրիկ ինդեքս՝ Ներթվորքինգ

$$I_{G_1} = \frac{0.246}{137} * 100 = 0,180$$

Պարամետրիկ ինդեքս՝ Շուկա մուտք գործելու հնարավորություններ

$$I_{G_1} = \frac{0.196}{137} * 100 = 0,143$$

Պարամետրիկ ինդեքս՝ Տեխնոլոգիական կլանում

$$I_{G_1} = \frac{0.294}{137} * 100 = 0,215$$

Պարամետրիկ ինդեքս՝ Մարդկային ռեսուրսներ

$$I_{G_1} = \frac{0.694}{137} * 100 = 0,433$$

Պարամետրիկ ինդեքս՝ Գործընթացային նորարարություն

$$I_{G_1} = \frac{0.133}{137} * 100 = 0,097$$

Որոշենք AIPn-ի ինդեքսը, ինչի համար նպատակահարմար է կիրառել կոմպլեքս-համակարգային մեթոդը: Ռանգավորման

առավելագույն կետը 0,433-ն է, իսկ $\frac{a_1 + a_2 + \dots + a_n}{n}$ –ը՝ ներառված ցուցանիշների միջին թվաբանականը $(0,180+0,143+0,215+0,433+0,097/5)$ ՝ 0.214,

$$x_{1j} = \frac{0.214}{0.433} = 0,493$$

Այսպիսով, վերը կատարված բոլոր հաշվարկների արդյունքներով Հայաստանն ունի միջին դիրք ուսումնասիրված երկրների շարքում: Միջին դիրքում գտնվելը պայմանավորված է ատենախոսության մեջ բացահայտված մի շարք խոչընդոտներով, որոնք ծառանում են ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի առջև:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե՛ արտադրական, թե՛ ոչ արտադրական ենթակառուցվածքների ուսումնասիրությունը և վերլուծությունը կատարել ենք ատենախոսու-

Աղյուսակ 2. AIPi ինդեքսի հաշվարկը

Ցուցանիշներ	Պարամետրիկ ինդեքսներ					Ռանգավորման արավելավորյուն կետ	AIPi
	Մեկնարկի հանութուններ	Ռիսկայնություն	Մրցակցություն	Միջազգայնացում	Ռիսկ-կառխտակ		
Զարգացած երկրներ							
ԱՄՆ	0,730	0,707	0,730	0,730	0,639	0,730	0,969
Ֆրանսիա	0,407	0,548	0,540	0,558	0,560	0,560	0,932
Շվեյցարիա	0,525	0,642	0,730	0,730	0,730	0,730	0,920
Գերմանիա	0,457	0,480	0,619	0,638	0,555	0,638	0,862
Մեծ Բրիտանիա	0,418	0,639	0,619	0,601	0,474	0,639	0,861
Կանադա	0,580	0,517	0,494	0,684	0,730	0,730	0,823
Ավստրիա	0,696	0,490	0,556	0,658	0,460	0,696	0,822
Ճապոնիա	0,124	0,474	0,434	0,442	0,399	0,474	0,790
Ավստրալիա	0,730	0,523	0,414	0,462	0,730	0,730	0,783
Իտալիա	0,293	0,298	0,248	0,415	0,504	0,504	0,698
Չինաստան	0,178	0,342	0,243	0,226	0,730	0,730	0,471
Ռուսաստան	0,346	0,141	0,149	0,040	0,136	0,346	0,469
Նավթ արդյունահանող երկրներ							
Դանիա	0,504	0,546	0,722	0,285	0,730	0,730	0,763
Նիգերիա	0,071	0,152	0,155	0,066	0,112	0,155	0,718
Ալժիր	0,228	0,288	0,119	0,140	0,195	0,288	0,673
Կոլումբիա	0,388	0,197	0,148	0,350	0,222	0,388	0,673
Նորվեգիա	0,394	0,729	0,490	0,206	0,613	0,729	0,667
Մաուրյան Արաբիա	0,681	0,318	0,137	0,514	0,580	0,681	0,655
Ինդոնեզիա	0,208	0,167	0,182	0,008	0,100	0,208	0,640
Քուվեյթ	0,161	0,454	0,153	0,347	0,514	0,514	0,634
Կատար	0,145	0,321	0,440	0,386	0,698	0,698	0,570
Արգենտինա	0,558	0,014	0,147	0,064	0,283	0,558	0,382
Իրան	0,726	0,010	0,168	0,119	0,245	0,726	0,349
Վենեսուելա	0,571	0,018	0,058	0,022	0,047	0,571	0,251
Ցամաքով շրջափակված երկրներ							
Պարագվայ	0,170	0,113	0,140	0,070	0,092	0,170	0,687
Մոլդովա	0,200	0,009	0,089	0,180	0,188	0,200	0,665
Հայաստան	0,225	0,043	0,177	0,200	0,086	0,225	0,650

Մակեդոնիա	0,309	0,081	0,231	0,144	0,224	0,309	0,640
Դրոզդան	0,178	0,011	0,131	0,105	0,127	0,178	0,621
Ղազախստան	0,324	0,089	0,172	0,166	0,224	0,324	0,602
Բոլիվիա	0,276	0,093	0,144	0,108	0,177	0,276	0,579
Ադրբեջան	0,141	0,105	0,181	0,321	0,140	0,321	0,554
Չադ	0,018	0,018	0,054	0,075	0,031	0,075	0,524
Ռուանդա	0,078	0,066	0,247	0,093	0,050	0,247	0,432
Լաոյի Ժողովրդավար ական Հանրապետությո ւն	0,095	0,007	0,229	0,044	0,104	0,229	0,418
Բուրկինա Ֆասո	0,045	0,018	0,132	0,047	0,026	0,132	0,408

Աղյուսակ 3. AIPn-i ինդեքսի հաշվարկը

Ցուցանիշներ	Պարամետրիկ ինդեքսներ						AIP n-i
	Ներվորքինգ	Շուկա մուտք գործելու հնարավորություն	Տեխնոլոգիական կլանում	Մարդկային ռեսուրսներ	Գործընթացային նորարարություն	Ընդգնակողական աջակցություն	
Զարգացած երկրներ							
Մեծ Բրիտանիա	0,452	0,675	0,730	0,542	0,511	0,730	0,797
Գերմանիա	0,278	0,554	0,630	0,352	0,613	0,630	0,771
Իտալիա	0,276	0,283	0,404	0,155	0,532	0,532	0,620
Կանադա	0,457	0,729	0,568	0,666	0,553	0,729	0,816
ԱՄՆ	0,416	0,620	0,594	0,730	0,658	0,730	0,827
Ֆրանսիա	0,491	0,499	0,613	0,456	0,687	0,687	0,800
Ճապոնիա	0,246	0,429	0,659	0,718	0,730	0,730	0,762
Չինաստան	0,374	0,196	0,184	0,380	0,554	0,554	0,610
Ռուսաստան	0,399	0,160	0,197	0,497	0,263	0,497	0,610
Ավստրալիա	0,510	0,636	0,570	0,693	0,574	0,693	0,860
Շվեյցարիա	0,389	0,705	0,730	0,576	0,659	0,730	0,838
Ավստրիա	0,403	0,590	0,687	0,291	0,597	0,687	0,748
Նավթ արդյունահանող երկրներ							
Սաուդյան Արաբիա	0,730	0,584	0,080	0,260	0,102	0,730	0,481
Կատար	0,539	0,550	0,247	0,643	0,377	0,643	0,732
Իրան	0,431	0,197	0,355	0,313	0,149	0,431	0,671
Վենեսուելա	0,248	0,014	0,095	0,099	0,216	0,248	0,542

Ալժիր	0,364	0,122	0,197	0,209	0,072	0,364	0,529
Քուվեյթ	0,390	0,417	0,201	0,445	0,222	0,445	0,752
Կոլումբիա	0,288	0,190	0,329	0,345	0,143	0,345	0,750
Ինդոնեզիա	0,442	0,226	0,061	0,117	0,146	0,442	0,449
Նորվեգիա	0,346	0,730	0,549	0,306	0,340	0,730	0,622
Նիգերիա	0,198	0,053	0,108	0,291	0,122	0,291	0,530
Արգենտինա	0,289	0,132	0,325	0,206	0,199	0,325	0,708
Դանիա	0,463	0,730	0,730	0,730	0,528	0,730	0,871
Ցամաքով շրջափակված երկրներ							
Հայաստան	0,180	0,143	0,215	0,433	0,097	0,433	0,493
Ադրբեջան	0,141	0,167	0,301	0,412	0,116	0,412	0,551
Ղազախստան	0,386	0,268	0,091	0,555	0,121	0,555	0,512
Ղրղզստան	0,117	0,209	0,121	0,546	0,074	0,546	0,391
Լատվի Ժողովրդավարական Հանրապետություն	0,125	0,220	0,113	0,312	0,053	0,312	0,527
Բոլիվիա	0,280	0,036	0,071	0,137	0,092	0,280	0,440
Պարագվայ	0,161	0,143	0,137	0,114	0,070	0,161	0,774
Ռուանդա	0,150	0,181	0,155	0,145	0,089	0,181	0,795
Մոլդովա	0,132	0,201	0,254	0,255	0,142	0,255	0,772
Չադ	0,049	0,039	0,111	0,074	0,073	0,111	0,622
Բուրկինա Ֆասո	0,110	0,148	0,105	0,029	0,069	0,148	0,621
Մակեդոնիա	0,194	0,186	0,343	0,300	0,270	0,343	0,754

թյան առաջին գլխում սահմանված ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության չափման նույն ինդիկատորներով՝ հարկ ենք համարում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման հիմնական ուղիներն առաջարկել ըստ վերը նշված ինդիկատորների:

Ֆինանսական ռեսուրսների հասանելիություն

ՀՀ-ում գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն անդրադառնում են դրա ֆինանսական ռեսուրսների հասանելիության վրա:

Ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանն ուղղված առաջարկում ենք կատարել հետևյալ փոփոխությունները.

Ձեռնարկատիրական գործունեություն ծավալող սուբյեկտների համար ֆինանսական միջոցների հասանելիությունը բարձրացնելու նպատակով առաջարկում ենք բանկերում և վարկային կազմակերպություններում ներդնել «Բազել IV» մոնիթորինգի համակարգը, որի առավել ցայտուն դրական կողմերից կարելի է առանձնացնել Լևերիջի առավել բարձր գործակիցը¹, (ներկայումս բանկային համակարգում ներդրված «Բազել III»-ում լևերիջի գործակցի 3% նվազագույն շեմ, IV –ում՝ 5 %-ից

¹ Տրված կապիտալի մակարդակի պայմաններում բանկերի կողմից ակտիվների չափազանց մեծ ծավալների ներգրավման սահմանափակման գործակից:

բարձր), կապիտալի չափի համընդհանուր ստանդարտների սահմանում, բանկերի կողմից վարկանշման և վարկունակության գնահատման ներքին մոդելների բացառում և ստանդարտացված մոդելների կիրառում:

Քանկերի և վարկային կազմակերպությունների վարկային մասնագետների վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուղղված ոլորտային և ճյուղային կազմակերպություններին վարկերի տրամադրման հարցի առավել խորը մասնագիտական ուսումնասիրմանը և ճիշտ որոշումների կայացմանը:

Կորպորատիվ հաճախորդների պետական աջակցության արդյունավետության բարձրացում: Մասնավորապես, պետական աջակցության գործող ծրագրերի իրականացման նկատմամբ վերահսկողության ուժեղացում, ինչը ենթադրում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցման գործընթացների նկատմամբ պետական վերահսկողություն, և որպես արդյունք նաև ՀՀ ԿԲ-ի կողմից առևտրային բանկերում տոկոսադրույքների սահմանման ընթացակարգերի նկատմամբ վերահսկողության ուժեղացում:

Առաջարկում ենք ընդլայնել ՀՀ ԿԲ-ի կողմից վարկանշող հանձնաժողովի կողմից վարկանշվող ձեռնարկությունների ցանկը, միաժամանակ, սահմանել տրամադրվող վարկային միջոցների միջակայքային սահմանաչափ՝ ըստ կազմակերպության կողմից ստացված վարկանիշի, որը հիմք կհանդիսանա բանկերի և վարկային կազմակերպությունների համար վարկերի տրամադրման ընթացակարգերն առավել արագ և արդյունավետ կազմակերպելու համար, ինչն էլ իր հերթին ձեռնարկությունների համար կհեշտացվի վարկային միջոցների ներգրավման գործընթացը:

Առաջարկում ենք առավել հեշտացնել սկսնակ բիզնեսների համար վարկերի տրամադրումը՝ ըստ բիզնես ծրագրերի:

Օրենսդրական կարգավորում

Օրենսդրական կարգավորման նպատակով առաջարկում ենք հետևյալը՝

Առաջարկում ենք ենթակառուցվածքային կառավարում իրականացնող պետական մարմնի կողմից իր կանոնադրությամբ սահ-

մանված կառավարման օբյեկտների շարքում ավելացնել նաև մեր կողմից առաջարկված ենթակառուցվածքային համակարգը՝ համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի ընդունման միջոցով:

Առաջարկում ենք բարելավել հարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը, ինչին հասնելու համար նպատակահարմար է իրականացնել հարկային վարչարարության կատարելագործման և տնտեսական աճի ապահովման հաշվին, քանի որ այդ մասով մեծ ներուժ կա, իսկ հարկային դրույքաչափերի բարձրացման կամ հարկման բազայի ընդլայնմանն ուղղված միջոցառումները կարող են մեծ դժգոհություններ և բացասական հետևանքներ առաջացնել տնտեսությունում՝ երկարաժամկետ հատվածում զսպելով տնտեսության զարգացումը: Քանի որ Հայաստանն այն երկրներից է, որոնք շահութահարկի առավել բարձր տոկոսադրույք են սահմանել, կարծում ենք, որ շահութահարկի տեսանկյունից անհրաժեշտություն կա Հայաստանի առանձին աշխարհագրական գոտիների, տնտեսական գործունեության տեսակների և արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերի նկատմամբ կիրառել տարբերակված դրույքաչափեր, ինչը համաչափ զարգացման գրավականն է, տնտեսության զերակա ճյուղերի արդիականացման հիմքը և արտահանելի հատվածի ընդլայնման նախապայմանը: Նման տարբերակվածությունը հաճախ խախտում է հարկման արդարության և հավասարության սկզբունքները, բարդացնում հարկման գործընթացը և ստեղծում անհավասար մրցակցային պայմաններ, ուստի շատ կարևոր է, որ տարբերակված դրույքաչափերի կիրառման քաղաքականությունն անպայմանորեն ուղեկցվի դրա հետևանքով առաջացող ռիսկերի կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրմամբ և համապատասխան օրենսդրական կարգավորումների իրականացմամբ:

Առաջարկում ենք ներկրվող ապրանքների դեպքում երկրի ներսում դրանց վաճառքն իրականացնել 0-ական ԱԱՀ-ով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մաքսագերծման ժամանակ ներկրողն արդեն իսկ տվյալ ապրանքի մասով պետությանը վճարել է ԱԱՀ:

Առաջարկում ենք նվազագույնի հասցնել օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի փոփոխությունների հաճախականությունը:

Առաջարկում ենք համապատասխան օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի ընդունման միջոցով ստեղծել հարկային ռեգիստրներ, որոնք կիրականացնեն հարկային վերահսկողություն ըստ առանձին ենթակառուցվածքների:

Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում առաջարկում ենք համապատասխան օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի ընդունման միջոցով ստեղծել 10 անձանցից կազմված կոռուպցիայի դեմ պայքարի պետական մարմին, որի կազմը ՀՀ վարչապետի, ՀՀ ազգային ժողովի նախագահի և ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահի առաջարկությամբ կհաստատի ՀՀ նախագահը՝ 3 տարի ժամկետով, առանց վերընտրվելու իրավունքի: Ստեղծվող մարմինը, սերտ համագործակցելով ՀՀ պետական վերահսկողության ծառայության, ՀՀ հաշվեքննիչ պալատի, ՀՀ դատական դեպարտամենտի հետ, ՀՀ ուժային կառույցների միջոցով կզբաղվի կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմամբ:

Հարկային համակարգ

ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք հետևյալ ուղիները՝

Առաջարկում ենք արդար և հավասար սկզբունքներով հարկային վարչարարության իրականացում, հարկային բեռի հավասարաչափ բաշխում, ՀՀ կառավարության կողմից ընդունված երկրի տնտեսական զարգացման ծրագրերին համապատասխան հարկային համակարգի ներդրում, հարկային օրենսդրությունում առկա տարընթերցումների վերաբերյալ հստակ պարզաբանումների մշակում, հարկային վարչարարության համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի ապահովում:

Առաջարկում ենք հարկային օրենսգրքի և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխանեցման միջոցով հարկային և ֆինանսական հաշվառումների միջև առկա տարբերությունները վերացնել: ՀՀ հարկերին վերաբերվող օրենսդրական ակտերից պարզ է դառնում, որ հարկային հաշվառումն էականորեն տարբերվում է ֆինանսական հաշվառումից թե՛ իր

սկզբունքներով, թե՛ նպատակով և թե՛ մեթոդական տարբեր մոտեցումներով: Այսպես օրինակ, հարկային օրենսդրության դիտարկումը ցույց է տալիս, որ հարկային հաշվառման նպատակը հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը համաձայն հարկերի հաշվարկումն է և բյուջե վճարումը, մինչդեռ՝ ֆինանսական հաշվառման նպատակը հաշվապահական հաշվառման օրենսդրությանը համաձայն կազմակերպությունների կողմից այնպիսի ֆինանսական հաշվետվությունների կազմումն ու ներկայացումն է, որոնք ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին կազմակերպությունների ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ կապահովեն անկողմնակալ տեղեկատվությամբ: Տարբերություններն առկա են նաև հաշվառման այս երկու տեսակների մեթոդական մոտեցումների կամ կանոնակարգման սկզբունքների մեջ:

Հայաստանի Հանրապետությունը ֆինանսական հաշվառման վարման գործընթացում ընտրել և օգտագործում է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և հաստատուն քայլերով գնում է դեպի այդ համակարգ: Սակայն կապված հարկային և ֆինանսական հաշվառումների տարբերությունների վերացման հետ, հաշվի առնելով, որ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների սկզբունքները չեն կարող հարմարեցվել մեր հարկային օրենսդրությանը, հետևություն կարող ենք անել, որ հարկային և ֆինանսական հաշվառումների տարբերությունները կարող ենք վերացնել ՀՀ հարկային օրենսգրքը ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների սկզբունքներին հնարավորինս համապատասխանեցնելու միջոցով:

Առաջարկում ենք պարտադիրության սկզբունքով կազմակերպությունների ներսում ներդնել հարկային պլանավորման համակարգ, ինչը ենթադրում է հարկային հաշվառման վարման համապատասխան կանոնակարգի մշակում և ներդրում, որի ներդրման և կատարման նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի կազմակերպության ներքին վերահսկողական մարմնի կողմից:

Մաքսային համակարգ

Պետությունը տնտեսական կայունացման և զարգացման համար պետք է մշակի մաքսային այնպիսի քաղաքականություն, որն առաջին հերթին ուղղված լինի տեղական արտադրողների արտադրանքի արտահանման ծավալների աճին, որպեսզի նրանք ժամանակի ընթացքում հզորանան և շուկայում բարենպաստ դիրք գրավեն՝ աստիճանաբար կրճատելով երկրի կախվածությունը օտարերկրյա ներմուծումներից և ներդրողներից:

Վերոգրյալով պայմանավորված ՀՀ մաքսային համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք հետևյալ ուղիները՝

Առաջարկում ենք մաքսային ձևակերպումների, մաքսային ստուգմանը նախորդող նախապատրաստական աշխատանքների, մաքսային ստուգումների և մաքսագերծման գործընթացների կատարելագործման միջոցով նվազագույնի հասցնել հետբացթողումային հսկողության կիրառումը:

Առաջարկում ենք մաքսային բոլոր անցակետերում մաքսագերծման գործընթացները կազմակերպել մեկ պատուհանի սկզբունքով, ինչը կմիասնականացնի կատարվող գործողությունները և կապահովի դրանց առավել արագ և արդյունավետ իրականացումը:

Առաջարկում ենք իրականացնել մաքսագերծման հետ կապված բոլոր վճարների հանրագումարի հետաձգված վճարման համակարգի ներդրում՝ երկարաժամկետ համամասնական վճարումների սկզբունքով:

Դատաիրավական համակարգ

Դատաիրավական համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում ենք հետևյալ ուղիները՝

Առաջարկում ենք բարձրացնել ներդրումների արդարացվածությունն իրավական տեսանկյունից հարկային արտոնությունների տրամադրման միջոցով: Այդ հարկային արտոնությունները նպատակահարմար է տրամադրել այնպիսի ոլորտներին, որոնց ներդրումային գրավչությունը ցածր մակարդակի վրա է:

Առաջարկում ենք ձեռնարկատիրական գործունեության շուրջ առաջացող վեճերը քննել առանձին մասնագիտացված խորհուրդների կազմման միջոցով, քանի որ դրանց լուծման արդարացիությունը հաճախ բխում է ոլորտային առանձնահատկություններից տեղեկացվածության մակարդակից:

Դատական համակարգի հանդեպ վստահության աստիճանի բարձրացման նպատակով առաջարկում ենք ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կողմից գործուն քայլերի իրականացման միջոցով բարձրացնել դատավորների անկախության և անաչառության մակարդակը: Մասնավորապես, ներդնել դատական գործընթացների իրականացման էլեկտրոնային համակարգ, որի միջոցով նվազագույնի կհասցվի դատարանից դուրս դատավարության մասնակիցների առերես շփումը, ինչն էլ իր հերթին կբարձրացնի դատական գործընթացների թափանցիկության աստիճանը: